ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանի, ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական Դավիթ Գասպարյանի և ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետ Անի Մխիթարյանի՝ Բելառուսի Հանրապետություն (Մինսկ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Ռուստամ Բադասյան, Դավիթ Գասպարյան և Անի Մխիթարյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական, ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Բելառուսի Հանրապետություն (Մինսկ), 2019 թվականի նոյեմբերի 25-28-ը և նոյեմբերի 26-28-ը:

Հրավիրող կողմը՝ Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարար:

Գործուղման նպատակը՝ ԱՊՀ մասնակից պետությունների արդարադատության նախարարների խորհրդի 14-րդ նիստին, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների արդարադատության նախարարների խորհրդին կից «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի 1993 թվականի հունվարի 22-ի և «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի 2002 թվականի հոկտեմբերի 7-ի կոնվենցիաների կիրարկման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ առաջարկություններ մշակող աշխատանքային խմբի չորրորդ նիստին մասնակցելը:

Քննարկված թեմաները՝ ԱՊՀ մասնակից պետությունների արդարադատության նախարարների խորհրդի 14-րդ նիստի ընթացքում քննարկվել են այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ բնակչությանը պետական

ծառայությունների տրամադրման մեխանիզմների կատարելագործումը, քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնության տրամադրման ընթացակարգերի բարելավումը, կոռուպցիայի կանխարգելման ոլորտում արդարադատության նախարարությունների դերը և մի շարք այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի խորհրդական Դավիթ Գասպարյանը 2019 թվականի նոյեմբերի 26-ից 28-ը, իսկ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետ Անի Մխիթարյանը 2019 թվականի նոյեմբերի 25-ից 28-ը Բելառուսի Հանրապետությունում (Մինսկ) մասնակցել են՝ ԱՊՀ մասնակից պետությունների արդարադատության նախարարների խորհրդի 14-րդ նիստին, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների արդարադատության նախարարների խորհրդին կից «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի 1993 թվականի հունվարի 22-ի և «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի 2002 թվականի հոկտեմբերի 7-ի կոնվենցիաների կիրարկման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ առաջարկություններ մշակող աշխատանքային խմբի չորրորդ նիստին:

ԱՊՀ մասնակից պետությունների արդարադատության նախարարների խորհրդի 14-րդ նիստին մասնակցել են Բելառուսի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ուզբեկստանի Հանրապետության արդարադատության նախարարները, Տաջիկստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության արդարադատության նախարարների տեղակալները, ինչպես նաև Բելառուսի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության դեսպանության ներկայացուցիչը:

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը ԱՊՀ մասնակից պետությունների արդարադատության նախարարների խորհրդի 14-րդ նիստում հանդես է եկել ելույթով: Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարը անդրադարձել է Հայաստանի դատաիրավական և հակակոռուպցիոն ոլորտներում իրականացվող բարեփոխումներին, օրենքի գերակայությանը, հանրային ծառայությունների մատուցման բարելավմանն ու մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող և մի շարք այլ հարցերի: Այս համատեքստում, ՀՀ արդարադատության նախարարը ԱՊՀ մասնակից պետությունների արդարադատության նախարարներին ներկայացրել է Հայաստանում բնակչությանը մատուցվող պետական ծառայությունների մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված քայլերը, մասնավորապես, այդ ծառայությունները մասնավոր հատվածին և համայնքներին պատվիրակելու նախաձեռնությունը, որը միտված է մենաշնորհի և կոռուպցիոն ռիսկերի վերացմանը, ինչպես նաև այդ ծառայությունները քաղաքացիներին ավելի հասանելի դարձնելուն: Իր խոսքում ՀՀ արդարադատության նախարարը կարևորել է 2019թ. հոկտեմբերին ՀՀ կառավարության կողմից հաստատված Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված «մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող որոշ ծառայությունների մատուցման միասնական կենտրոն ստեղծելու միջոցառումը և այդ հարցում էլեկտրոնային գործիքների ներդրումը:

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը անդրադարձել է նաև ՀՀ կառավարության կողմից գերակա ուղղություն հայտարարված կոռուպցիայի դեմ պայքարին՝ նշելով, որ թեև 2018 թվականին Հայաստանում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններից հետո համակարգային կոռուպցիան արմատախիլ է արվել, այդուհանդերձ, այս պայքարում Հայաստանի ջանքերը շարունակական ու համակարգված են լինելու. պայքարն իրականացվելու է ինչպես ռազմավարական միջոցառումների, այնպես էլ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ

համակարգի զարգացման, ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագանձման միջոցով:

Նախարար Բադասյանը ԱՊՀ մասնակից պետությունների արդարադատության նախարարներին ներկայացրել է նաև մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված քայլերը՝ կարևորելով քաղաքացիների իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովմանն ուղղված մեխանիզմների կատարելագործումը:

Ամփոփելով իր ելույթը՝ ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը իր գործընկերներին առաջարկել է ստեղծել միասնական էլեկտրոնային հարթակ՝ ԱՊՀ մասնակից պետությունների միջև քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում տեղեկատվության փոխանակումն առավել օպերատիվ և արագ կազմակերպելու համար:

Recoverable Signature

X

Rustam Badasyan

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

Հարգանքով,
ՀՀ արդարադատության
նախարար՝

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ
29 նոյեմբեր 2019թ.